Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 1031 - Ն որոշման

«Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության կառավարության
2019 թվականի օգոստոսի 1-ի N 1009 – Ն որոշման

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 101

**«ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ (ՄՄ ՏԿ 015/2011)
ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի» թիվ 1 հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը որոշեց.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված՝ «Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 015/2011) թիվ 2 հավելվածում կատարել հետեւյալ փոփոխությունը՝

«Յուղատու մշակաբույսեր (արեւածաղիկ, սոյա, բամբակենի, կտավատ, կանճրակ, մանանեխ, քունջութ, գետնընկույզ)» դիրքում «կադմիում» տողը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Կադմիում	0.1	
	0.2	Արեւածաղկի սերմերի համար, որոնք նախատեսված են սննդի մեջ անմիջապես օգտագործվելու համար
	0,35 <****>	Արեւածաղկի սերմերի համար, որոնք նախատեսված են արեւածաղկի յուղ ստանալու նպատակով արդյունաբերական վերամշակման համար».

ավելացնել հետեւյալ բովանդակությամբ չորրորդ ծանոթագրություն՝

«****» Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների այն արտադրողների համար, որոնք արեւածաղկի յուղ են արտադրում արեւածաղկի այն սերմերից, որոնք արտադրված են Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության տարածքներում ու նախատեսված են արեւածաղկի յուղ ստանալու նպատակով արդյունաբերական վերամշակման համար։»:

2. Սահմանել, որ սննդային նպատակների համար օգտագործվող արեւածաղկի սերմերի՝ «Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 015/2011) սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը հաստատելու մասին փաստաթղթերը, որոնք ընդունվել են մինչեւ սույն որոշումն ուժի մեջ մտնելը, վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիսը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	Վ. ՄԱՏՅՈՒՇԵՎՍԿԻ	Ա. ՄԱՄԻՆ	Տ. ԱԲԴԻԳՈՒԼՈՎ	Ի. ՇՈՒՎԱԼՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ